

**ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՇԱՀՈՒԹԱԿԱՐԿԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ընդունված է
22 դեկտեմբերի 2010 թ.

Հոդված 1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) առաջին նախադասության «5-ից» բառերը փոխարինել «20-ից» բառերով.

2) երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ընդ որում, հարկային գործակալը պարտավոր է տարին մեկ՝ հաջորդ տարվա փետրվարի 20-ից ոչ ուշ, սահմանված ձևով ներկայացնել ամփոփ հաշվարկ իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային տեսչության մարմին՝ անցած տարում ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին (ամսական կտրվածքով):»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից և կիրառվում է 2011 թվականի հունվարի 1-ից հետո հաշվետու ժամանակաշրջանների համար:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

2010 թ. դեկտեմբերի 28
Երևան
ՀՕ-210-Ն